ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 429
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի *ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքը (Դսեղ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Թումանյան համայնքի (Դսեղ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքը (Դսեղ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի (Դսեղ բնակավայրը) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
06-035-0135-0106 կադաստրային ծածկագրով 0.35408 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	06-035-0135-0106 կադաստրային ծածկագրով 0.35408 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրությամբ ներկայացված պահանջը (կցվում է):

4. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Դսեղ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, «26» դեկտեմբերի» 2025 թ.